

27. ՕԽՈՐ

Կէղնի, չէղնի մարդ մը։ Մարդու անուն Եղո կէղնի։ Եղոին կէղնի ախչիկ ու աղե մը։

Ժամանակ մը կմնա Եղո կնիկ կմեռնի ու Եղոն կկարգվի, անիրավ, անզգամ կնիկ մը ուրեն կբերա։ Ու էդ կնիկ զէդ ճժեր չը շայա ու ախչիկըմ լա կէղնի էդ կնկան, կբերա հետ։ Ջանուշ բրդուճ կկերցու էդա ախչկան, թոնգրան կուտ ու քերիչ կիտա տղին ու ախչկան։

Ժամանակ մը կընցնի մեջտեղ։ Ըդ Եղոն քանի կաշխատի, կուշտ չուտա ու հալի չը հասնի։ Հ՝ըմեն տարի ինչ օր ցանա, չը բուսի, հ՝որի օր ուր կնիկ սերմ կխաշա ու ընիկ կտանի կցանա։ Շատ խեղճ կէղնի։

Կնիկ մարդուն կըսա.— Մարդ, ես հ՝էսօր էրազ մ՝եմ տեսի։

Մարդ կըսա.— Աստված խերն էնա։

Կնիկ կըսա.— Ես քըզի կպատմիմ, բայց կէնիս, չէնիս՝ դու գինաս։ Հ՝որի օր մըր խղճութեն ապով։ Ես հ՝էսօր մեջ էրզին տեսա. մարդ մը էկավ ընձի ըսեց. «Ինչու՞ զդա խղճութեն կքաշիք, հ՝որի օր ձեր ցանելուն հանգիստ կերպ մը կա,— ըսեց,— լուտուն էլի, քու մարդուն խոսա. թըխ տանի զուր ախչիկ-տղեն արտի գլուխ, զախչիկ մեկ գլուխ մորթա, զտղեն լա մեկ գլուխ մորթա։ Էն դախ ձեր ցանած լավ կէղնի»։ Իմ երազ էդա էր օր ես քըզի պատմի։ Ձիմ խոսք կէնիս, չէնիս՝ դու գինաս։

Էդրա մարդ Եղոն էնդրան ըսեց.— Անաստված, ի՞նչ սիրտ էղնի օր ես բոնիմ իմ էրեխեք ու մորթիմ։

Ըսեց.— Դու գինաս, չը՝ս մորթի՝ գնա զքու հալ քաշա,— ըսեց,— տարին տասերկու ամիս դու պտի կուշտ չուտիս։

Շատ օրեր հ՝ընցան մեջ։ Ըդ մարդ չկերցավ զուր յախան կնկաց աղատեր։ Ըսեց.— Ես կէրթամ արտ, դու կարող ես հանգիստ կերպով մը խարիս ճամբցուս՝ Ես կմորթիմ։

Էդ մարդ համոզվավ կնկան ու գնաց։

Կեսօրին էր։ Կնիկ սուկեց ճմուռ, զտղեն ու զախչիկ կուշտ կերցուց, սուկեց լանկառի մը լա ուր իրկան, արծլին լա դրեց տակ, տղին ու աղջկան ըսեց.— Դե էլեք հաց տարեք ձեր պապուն։

Տղեն ու աղջիկ էկան, առան ու գացին։

Շատ ու քիչ գացին, ճամբան նստան հանգստան։ Հավորիկ մը էկավ ուրանց գլուխ վերև, աստծու հրամայով էլավ լեզու, ըդոց հասկցուց ու ըսեց.— Քիչ մը ճմուռ իտաք ընձի, լավ աղեկ խոսքը մը կըսիմ ձրգի։

Փշու մը ճմուռ տվեցին ճնճղուն։

Ճնճուղ ըսեց.— Ձեր մամ ճմուռ սուկեր ա, զարծլին դրի տակ, օր ճամբցու ձեր պապուն, ձեր պապ հ՝ոնի զձրգի մորթա, ամեկդի արտի մը գլուխ։

Հ՝ոնի տղեն ու աղջիկ մըղբընան։ Էլան ուրիշ ճամբախ մը վերցին ու գացին։ Շատ ու քիչ գացին, տղեն հ՝ոդի ծարվըցավ։ Գացին վըր հ՝աղբրի մը ջուր խմեցին, տղեն կուշտ օր խմեց, ըսեց.— Օխո՜շշ, իմ ջիգրներ հովավ։

Օխոշ օր ըսեց, մարդ մը ազբրի մեջեն էլավ։

Ըսեց.— Հ՝որի՞ զիս կանչեցիր։

Տղեն ըսեց.— Քզի չըմ կանչիր ի։ Շատ ենք ծարվըցի, ջուր օր խմեցի, իմ ջիգրներ հովավ, ըսեցի՝ օխո՜շ։

Ըդ մարդ ըսեց.—Զէ, իմ անուն էր Օխոշ, դու չըս վարձվի՞։

Էնլա ըսեց.— Վոլա, ես կվարձվիմ։ Ես խեղճ տղա մ՝իմ։

Օր էդմալ ըսեց, ըդ մարդ առեց զէնի ու գնաց հ՝ազբրի ակ։ Ու աղջիկ էլավ տփվավ ու լաց։

Աղջիկ խաստ էնեց քաղքի մը ու գնաց։ Աղջիկ շատ ու քիչ մնաց, զուր գլխու գալած մարդու մը պատմեց։

Ըդ մարդ ըսեց աղջկան.— Օր հըմալ ա, գնա վըր հ՝աղբրին, էմլա ջուր խմա, ըսա՝ Օխոշ, ըդ մարդ կէլնի։ Ըտ մարդ օր էլավ ըսա՝ «Հ՝ու՞ր ի իմ ախբեր, տու տանիմ, հ՝որի օր իմ ախբոր խավլը լըմըցեր ա»։

Աղջիկ էկավ խաստ էնեց հ՝աղբրին ու էկավ։ Ջուր խմեց ու ըսեց՝ օխո՜շ։

Օխոշ էլավ։

Ըսեց.— Հ՝ու՞ր ի իմ ախբեր, տու տանիմ, հ՝որի օր իմ ախբոր խավլը լըմըցիր ա։

Օխոշ զուր ախբեր տվեց ու ախչիկ ու տղեն զիրար տեսան, շատ ուրախցան։

Տղեն ըսեց.— Ես շատ արհեստներ սովրիր իմ։

Ու Օխոշ ըսեց տղին.— Իմ ըսած արհեստներ քըզի չէղնի ուրիշ տեղ գործածիս, ուրիշ մարդիկ հասկնան, հ՝որի օր ես իմաստուն իմ։ Ինչ գախ կուզիս էդ արհեստներ գործածիս, ուրիշներ հասկնան, անպատճառ զքըզի կկորցում։

Ու տղեն առավ էնտեղեն զուր քուր, էկավ։ Էկան թեբի էդ քաղաք։ Քուրոշ ըսեց.— Ես կէղնիմ լավ քըհել ձի մը, դու տանիս զիս բազար, ծախիս ու իմ գամ իմ հետ չծախիս, օր զիս ծախեցիր, դարձար գացիր տուն, ես էմլա էդ տղեն կէղնիմ, կիգամ քու մոտ։

Ու տղեն կէղնի ձի մը։ Ախչիկ կտանի բազար, կծախա ու կիտա հազար օսկի։ Ու կըսա.— Մինակ ուր բերնի գամ պտի չի տամ։

Ախչիկ կառնի զգամ ու կդառնա։

Կիգա տուն ու տեսնի տղեն ուր ետևեն էկավ։

Էդ տեսակով տղեն շատ հարստութեն կբռնա։ Էղտեղ կէղնի տունուտեղի տեր ու կկարգվի, նորեն զուր արհեստ կառնի գործածել։

Իդա անգամեն տղեն կէղնի լավ կազախի եզ մը։ Ախչիկ կառնի, էրթա բազար, օր ծախա։ Կտեսնա օր Օխոշ էնդհեն կհասկնա, կիգա, կառնի զէդ եզ կէրթա։ Տղեն կէղնի աղվես մը, կփախի Օխոշի ձեռնեն։ Օխոշ կէղնի տաժի մը, կընկնա ետև։ Հասնելու օր կէլնի, տղեն կէղնի ճնճուղ մը, կթռնա։ Օխոշ կէղնի ցուրուր մը, կընկնա էդ ճնճուղի ետև։ Օխոշ օր կմոտենա՝ ճնճուղ կեղնի կորեկ, կթափի գետին։ Օխոշ կէղնի ճետ մը օր հ՝ընտրա։ Կորեկ կէղնի ջղարի կութի մը։ Օխոշ կէղնի մարդ, կվիրու ջղարի կութին, օր ջղարա փաթութա։ Օխոշ ջղարի կութու բերան օր կբանա, տղեն կէղնի ջուխտըմ արաբ, ջղարի կութու միջեն կէլնի ու բալթեն վըր ուրանց թևերուն։ Ծարահատյալ մնալով, իտոնք զՕխոշ կիտան հ՝առջև բալթի։ ԶՕխոշ կսպանին, տղեն կէրթա, ինչքան ապրանք մը կա Օխոշին, կբերա, զուր քուր լա հ՝ոնի կկարդա, զուր տուն կմեկնա, կէղնի վաճառական մը, կհասնի ուր մուրազին։